

# ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

[Գ ԳԼՈՒԽ]\*

Հարցումն և որորդ ի նոյն զիշերին պաշտամանն: Է՛ր  
 փան հանապազորդ ի զիշերային փառաւորութեանս  
 զերգս երից մանկանցն անխափան բերէ սուրբ և ընդ-  
 5 հանրական եկեղեցի Քրիստոսի. յորոյ վերայ Քարոզ և  
 ապա Աղաւթքն նմանապէս կարգեալ: Կամ զի՛նչ պատ-  
 ճառ զԱստուած քաւեայն, և որ զՈղորմեացն. նոյնպէս  
 Քարոզն և Աղաւթքն. յետ որոյ և զՏէր յերկն/ւցն ընդ-  
 միջելով, յոր Փառք ի թարծունս յարի: Իսկ յաւուր մեծի  
 10 յարու՞թեանն տեառն Մեծացուցէ <sup>154<sup>p</sup></sup> սրբոյ կուսին.  
 և ապա զսուրբ Աւետարանն ընթերցեալ. արդ զի՛նչ ար-  
 դեաւք ցուցանին աշխարհն խորհրդածուք:

Պատասխանիք համառաւտեալք. Աստուած յաւիտե-  
 նական որ զամենայն հաստատեաց, զերևելիս ասեմ և  
 15 զաներևոյթ բնութիւնս, զոր բանիւ գոյացուցեալ ուսու-  
 ցանէն մեզ զիրք յոչնչէ. իսկ զթագաւորական զպատ-  
 կերն յետոյ ի պատիւ ինքեան տէրութեանն ստեղծա-  
 նէր ձեռաւք, առաւել մեծարեալ զանարդ նիւթն, յեր-  
 կինս հանելով ի տէրունեան փառս, որ է ըստ պատ-  
 20 կերին և ըստ նմանութեան. սակս որոյ հրամա(յ)է  
 արժանապէս քաղաքավարիլ, զի ինքնյաւժար ընթացիւք

\* Տես «Արարատ» ասորի-ճայնս, ծամակարգութեան մեկնութիւնս

1 Տես Համառօտ Գ գլուխ.

9 Ա. արի.

13 Տես Յով. Իմ. 85. «Եւ եթէ վ՛ս ի՛նչ պատճառի զընդ ե-  
րից մանկանցն հանապազ երգեն ի զիշերին . . . Քանզի ա՛ճն  
յաւիտենական որ զա՞մ արարածս բանիւ գոյացուցեալ, ուսուցին  
մեզ զիրք սուրբք յոչնչէ լեալ զա՛մ». և այլն:

14 Բ և հաստատեաց. «Եւ» օտար ձեռքով.

20 Բ հրամանայ.

21 Ա արձանապէս, Բ արժանապէս. «ձ» «ժ» փոխած օտար  
ձեռքով.

ըմբռնեսցէ գյառաջագրեալ խորհուրդ: Աստանաւր ի վայր  
 հարեալ շարին խնդմամբ, զանհասանելին ինքեան կա-  
 մելով յափշտակել քարձրութիւնն, յորում անհանդուր-  
 ժելին ի վերայ հասանէր աղէտ. զի զոր սիրան ընկալաւ  
 5 փափագանաւք զխրատ զնորին, և ձեանայր յառաջագի-  
 մութիւն. ուստի և քարշեալ իբր շղթայիւք ի խորս ան-  
 զիտութեանն, աստուած ինքեան յաւրինէր զկործանիչն.  
 ընդ որոյ հաւանեալ լծով զարտաքին ժառանգէր <sup>6<sup>m</sup></sup> զխա-  
 ւար, և ամենևին ընդ մահու <sup>155<sup>m</sup></sup> կորստեամբ գրաւեալ.  
 10 այս իսկ այսպէս եղելոյ, ոչ ևս կարացեալ ժուժկալել  
 իւրում պատկերին կործանման յաղթեալն ի մարդասի-  
 րութենէ Հայր, այլ ընդ առաջ գնացեալ մարգարէական  
 քարոզութեամբն, զիրկս արկեալ համբո՛ւրէր զդարձեալն  
 ի խոզաշաւեղ կռամոլութեանց, պատմուճան փառաց և  
 15 մատանի հրամայէ ազուցանել, առ ի նորոգել զմարդն  
 ծննդեամբ Որդւոյն իւրոյ ի սուրբ կուսէն, զի անգործ  
 լիցի շարն ոչինչ գտեալ յիւրոցն հողեղինիս: Ապա զմեծն  
 և զանպարագրելի եզն, և զանմահ իւր Որդի և բան  
 տայ ի գենումն. որով կոչէ ի հարսանիս գտիեգերս. և  
 20 այսպիսի տնաւրէնութեամբ նորոգել զսարերքս. և կեն-  
 դանացեալս անխափան ի կիր առեալ գերկուցդ մեծա-  
 պայծառ խորհուրդ աւուրցն գտանէ, զծննդեանն ասեմ  
 և զյարութեանն, ոչ միանգամ կամ երիցս կամ յոլովս,  
 այլ զաւրհանապագ միանգամ ի տարւոջն, զիսկականն  
 25 հռչակելով. նաև յամենայն միաշաբաթսն զնոյն խորհուրդ  
 քաջութեան Տեառն մերոյ և զմահու յուժումն, և զմեր  
 փրկութեանն վերստին տաւնեմք <sup>155<sup>p</sup></sup> երևելապէս, զսոյն

1 Բ գառաջագրեալ.

7 Բ «ա՞ծ» քերուած էր.

10 Ա ժուժկալ. Բ ժուժկալել, «ել» օտար ձևըով և տողից  
 քարձր: Դրինք Յով. Իմ. նման՝ ժուժկալել.

11 Ա. պատկերիս.

17 Բ հողեղինիս. «ս» քերած «ա» փոխած և շինած — հողե-  
 դինի առելն.

24 Ա. զիսկական.

27 Ա. սոյն. Բ զսոյն. «զ» օտար ձևըով.

և յամենայն աւուրս: Արդ տաւնէ եկեղեցի <sup>6<sup>f</sup></sup> Աստուծոյ  
հանապագ զփրկութիւն նախաստեղծին, զոր արար Որդին  
միածին. նախ զարուին ի ձեռն քաղղէացւոցն կործան-  
ման. և երից մանկանցն փառակցութեան Որդւոյն աս-  
5 տուծոյ: Բայց նախադասելոյ պատճառ զ'Լերնութիւն  
եր'ց մանկանցն քան զՏիրամհայն սաղմոս, զի նախ զա-  
րուին յառաջ բերէ զփրկանաւորութիւն: Վասն զի այր է  
զլուխ կնոջ, յետոյ և զիգականին զազատութիւն, ոչ  
ևս անաւրէնութեամբ յղանալ և արտամութեամբ ծնանիլ  
10 որդիս յանէծս: *Ամսագրոսն տոսոսս սոցր ս Վերնութիւնն*  
Վասն զի լուծաւ դատապարտութիւն սրբոյ Աս-  
տուածածնին որդէծնութեամբ. և քանզի բարձաւ ամե-  
նայն պատճառք մահու որ յանիծիցն մտին, մարմնանա-  
լով Որդւոյն Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիս-  
15 տոսի. և մահուամբ և յարութեամբ նորին ընդ նմին  
յարուցեալք ի թաղմանէ մեղացն, որք ընդ նմա մեռաք  
մկրտութեամբ: Նաև համարձակի ասել թէ, և ընդ աջմէ  
Հաւր նստաք պսակեալք. զայս տաւնէ եկեղեցի սուրբ:  
Յաղագս այսպիսի երախտեաց, որ առ մարդոյ եղև յԱս-  
20 տուծոյ, անդադար մատուցանէ զյառաջագոյն ասացեալ  
երգս երից մանկանցն: Եւ <sup>156<sup>w</sup></sup> զղաւթեան սաղմոսն  
առաջին, որպէս յաղագս Աղամայ, որ քրիստոսին եղև  
առ <sup>7<sup>w</sup></sup> ի բժշկութիւն ազգի մարդկան. և միւսն վասն  
Եւայի սրբութիւն, զորդէղբութիւնն ի մեզ ընդունել.  
25 այսու երկու խորհրդածութեամբք ի Քրիստոս միացեալ  
մարդն աստուծոյ, անխոնարհելի կալ ի սրբութեան ա-  
դաշէ զերբեակ միութիւնն աստուածութեան «քաւեայն՝  
ասելով, զիս զմնդուորս»: Բայց ասացելոցս զիտմանց  
ուժընդակ լինի մեզ միաշարաթուն աւուրն յայտնու-  
30 թեան, զոր ի միջի այսոցիկ կատարի, Մեծացուացէ  
Աստուածածնին միշտ կուսին նախամաւրն աւետիք յա-

21 Սաղ Ծ Ողորմեա Ինձ ա՞ծ.  
27 Բ ի ձեռն ա՞ծու՞ե  
27 Բ զքաւեայն. «զ» օտար ձեռքով.

բութեանն, ի հոգոյ ստեղծելոյն Ադամայ կենդանութեանն:

Բայց նախ որպէս մարգարէական բարբառովն ազաչէ, «Արի տէր» ի ծոցոյ հաւր ի փրկութիւն մեզ, և 5 մի թողուր իսպառ զկորուսեալսն. և եթէ «Տէր յաւզնել ինձ փութա». կամ ըստ գիշերն դաշն յուղւոյ, ասպընջական եկեալ յուղւոյ, որ յաւետարանն կայ. երթեալ առ իւր մտերիմ ժտէր, սակս երիցս խնդրելով նկանակս, որ զՆրբորդութիւնն նշանակէ, շարժել զոգոր- 10 մութիւն և գոյս աստուածութեանն. թէ առ ի սոյն սիրեցեալքն իմ <sup>156<sup>p</sup></sup> իակգբանէ, զոր և սիովնի աւետարանէ զցնծութիւն գտանել զփրկութիւն, Թագաւորեսցէ ասելով, [տէր] յախտեան. և եթէ, «Երանի է <sup>7<sup>e</sup></sup> որ յուսայ ի նա»: Ապա ընկալեալ գոյս զիտութեան աւետարանին 15 քարոզութեամբն որպէս յաստուածուստ վկայեալ, և ընկալեալ զփառացն ցնծալից ուրախութեամբ, հանապազորդեալ ախորժէ զԱւրհնութիւնսն երից մանկանցն, և զաւրհնութիւն յարուցելոյն ի մեռելոց. հրաման տալով նստելոցն ի խաւարի անգիտութեան գալ առ լոյսն ճրշ- 20 մարիտ, և համբառնալ զձեռս սուրբս առ փրկիչն բոլորից Քրիստոս. և զուարճանալ հրամայէ քարոզութեամբն աւետարանին մեծի ծագման յարութեանն Տեառն:

Չայս խորհուրդ փրկութեան ոչ նոր ինչ և առժամայն իմացեալ մանկանց եկեղեցւոյ, այլ անդուստ ի 25 վերուստ բազում աւրինակաւք. բայց որպէս յայտնեցաւ յառաջագոյն կարգեալ ի Հոգւոյն սրբոյ խորհուրդ պաշտաման եկեղեցւոյ սրբոյ Աւրհնութիւն երից ման-

4 Սաղ. 107. 27.

4 Ա. ի փրկութիւնն.

5 Բ. զկորուսեալս.

5 Սաղ. 40. 1.

7 Ա. յախտեանական. Բ. յաւետարանն. վերջին «և» օտար ձեռքով, տողից բարձր.

12 Սաղ ՃԽԵ 10.

13 Սաղ. Բ 15.

21 Քզ. Չուարճացեալքս.

հանցն, մահու յարութեամբն Քրիստոսի փրկութիւն նա-  
 խահաւրն. և Աստուած քաւեան՝ պաղատանս խոնարհու-  
 թեամբ ամենայն քրիստոնէից յաւուրս <sup>157<sup>m</sup></sup> աղուհացիցն  
 աղաւթքն հանապազաւր. նոյնպէս Մեծացուցէն և Ո-  
 5 դորմեացն խոնարհութեամբ նախահաւրն ազատութիւն  
 կուսականովն <sup>8<sup>m</sup></sup> ննդեամբն շնորհել: Իսկ զայն խոր-  
 հուրդ դիտապետութեան հրամանատարութիւն ծննդոց՝  
 աստուածահաւրն Դաւթի առ եկեղեցի սուրբ, թէ, «Չըն-  
 ակցէք զտէր յերկնից», և յաջորդովն «Աւրննցէք զտէր  
 10 յաւրնութիւն նոր», ասելովն, «Ուրախ եղև խորայել յա-  
 րարիչն». զայս երգս սրբութեան Պենտէկոստէին ասեմք  
 խորհրդաբերեալ, յորում և առաքեալքն ընկալեալ զկեն-  
 զանարար ողջոյն և զփշուճն Հոգւոյն սրբոյ՝ զոր Ազամ  
 հեռացոյց ի բնութենէս, զորս ճշմարտապէս պատկեր է  
 15 այնմ մեծի աւուր անստուերի, զորս մեծաձայն գոչէ  
 մարգարէն, «Աւրննցէք՝ ասելով, զաստուած ի սորու-  
 թեան նորա»: Վասն այսորիկ պատշաճեցուցանեմք  
 զասղմոսս զայս աւուրցն, որ յետ յարութեանն Փրկչին:  
 Արդ ասացեալքս աւրնութիւնք զմի ունին ի դիտումնն,  
 20 որ զանանցանելին վերաբերի խորհուրդ և Փառք ի քար-  
 ծովնայ զանախ կենացն, և զասակցութեան մարդկան  
 ընդ վերնոցն բնակութիւն, միաձայնութեամբ երգել  
 աւրնութիւն ամենասուրբ Երրորդութեանն: Չայս տաւ-  
 ն(է) եկեղեցի աստուծոյ յայտն <sup>157<sup>p</sup></sup> ապէս և ծածկապէս  
 25 հանապաղ ի ներկայս ըստ անաւր <sup>8<sup>p</sup></sup> էնութեանն Քրիստո-  
 սի, և որ յապառնոջն է յինելոց բարձրագոյն խորհուրդ  
 փառս տուեալ ստորիջեալ, իբր տակաւին ևս յերկարի՝  
 զմիասնականն գոչել: Առաստաղին իրգս զաւուրն ցու-  
 ցանէ խորհուրդ. զգոհացողականն ծաւալեցուցանէ քաւ-

2 Ա. քաւեայն.

7 Ա. ա՛ղնդոց. փիւ = ծննդոց.

8 Սաղ. ԴԽԸ 1.

9 Սաղ. ՃԽԹ 1.

10 Սաղ. ՃԽԹ 2.

16 Սաղ. ՃԾ 1.

րող աղաչել զամենակալն Հայր, թէ որ այսպիսի սքան-  
 ճելեալք պահպանեալ բարձրացոյց զազգս մարդկան, և  
 ամենայնազթող լինել արժանաւորեաց. և յարդեան ժա-  
 մանակս սրահեցէ զեկեղեցի իւր սուրբ մինչև ի գա-  
 5 շուստ Որդւոյ իւրոյ. զորս առաքեալ քահանայութեանն  
 ի վեր հանէ զԱղաւթս ժողովրդեանն առ Աստուած, հաս-  
 տատուն լինել ի կամս պատուիրանի նորա, և առաքե-  
 լական հաղորդութեամբ շնորհիւն վայելեալ ի կենցա-  
 ղումս, առ ի լինել տաճար մաքրագան սրբոյ և միաս-  
 10 նակաս Երրորդութեանն արժանաւոր ձայնիւ սուրբ  
 խորհրդով փառաւորել զմիածին Որդին Աստուծոյ:

[Դ ԳԼՈՒԽ]

Թէ որպէս պարտ եւ պատշաճ է իմանալ զՍուրբ Աստուածն  
 եւ զՄանկունսն:

15 Յետ այսորիկ խորհրդածութեամբ ապա և որ քան  
 զամենայն նախասացեալսդ բարձրագոյն է համարձա-  
 կեալք ընդ վերին գուարթունսն ոչ գոչեն ի դէմ  
 սրբասացութեան, այլ ի դէմս միածնի՞ն մի<sup>9</sup> աշնոյ  
 Որդւոյն աստուծոյ, այն՝ որ յառաջ քան զյաւիտեանս  
 20 էր ընդ Հաւր և Հոգւոյն սրբոյ:

Յետին ժամանակս մարդ եղեալ ի սրբոյ կուսէն  
 յաղագս զմարդն փրկելոյ, խաչեցաւ վասն մեր և թա-  
 ղեցաւ, և յարեաւ յաւուր երրորդի, և վերացաւ յեր-  
 կինս և նստաւ ընդ աջմէ Հաւր իւրոյ ծնաւդին: Արդ  
 25 յառաջագոյն գուշակելոյն Մովսիսի ոչխար հրամայէ զե-  
 նուլ ընդ երեկս, որ է ի լրման ժամանակի մահն Քրիս-  
 տոսի: Ապա և գառն զենեալ ի քահանայիցն առաւաւ-

6 Աղ. Գոհանամբ զքեն.

6 Բ ժողովրդեան.

12 Տես Համառօտ Դ զլուխ.

17 Ա շունի՞ ոչ.

26 Ա զմահն.

տուն աւրինադրի և երեկունն: Արդ՝ այս է ըստ սրբոյն  
 յաջողակ խոստովանութիւն առաւաւտին ասելով խաշե-  
 ցարն և երեկունն. այս է ճշմարիտ խոստովանութիւնն  
 հաւատոյ, [և] ոչ որպէս անիծեալն ստամիտ Լեոնին,  
 5 կամ աստուածուբայ և մարդադաւան ժողովն Քաղկե-  
 դոնի, որ փոխանակ խաշեցար ասելոյ՝ ըստ առաքելա-  
 կան և մարգարէական քարոզութեանն, ասացին ուր  
 ուրեք, Սուրբ Աստուած որ մատնով խաշեցար Եւ այս-  
 պիսիք ևս յօլովք հայհոյութեան բանք, որ կայ ի նոցա  
 10 յամբարշտութեան կտակի, զոր նզովէ սուրբ եկեղեցի,  
 յորս հաստատուն հիմամբք ի վերայ աստուածային վի-  
 մացն շինեալ: Արդ զայս ամենայն յառաջագոյն 9<sup>ր</sup> գի-  
 տացեալ սրբոյ և առաքել<sup>158<sup>ր</sup></sup>ական եկեղեցւոյ, յիրաւի-  
 ասէ, «Սուրբ Աստուած, սուրբ և հզաւր սուրբ և ան-  
 15 մահ, որ խաշեցատ վասն մեր ողորմեա մեզ»: Վասն զի  
 աստուած էր Բանն, որ մարդացաւն ի սուրբ կուսէն. և  
 հզաւր է, որ յաղթեաց երկրորդ անգամ, այսինքն բան-  
 սարկուին. և անմահ է, որ անմահացոյց զմեզ մարմնա-  
 նալովն անմահ և անապական Բանն աստուած: Արդ ե-  
 20 ըիցս ասելով սուրբ սուրբ սուրբ և հզաւր, զՀաւր և  
 զՀոգւոյն սրբոյ կամս միաւորութեան ընդ Որդւոյ ի խաշ  
 անդր ծանեայք. խորհուրդ բերեալ ասելով, սուրբ և  
 անմահ, որ վասն մեր խաշեցար ողորմեա կամաւք Հաւր  
 և Հոգւոյն յաղագս աշխարհի կենաց: Արդ հոգևորապէս  
 25 ծանուցեալ զխորս պատուիրանի մտաց՝ կեցցուք, և լոյս  
 արեգականն իբրև զլոյս աւուրցն եւթանց, զոր և կա-  
 տարելամիտ սրբոցն ի ծագել մեծի արեգականն Քրիս-  
 տոսի, ըստ որում և այժմ տեսանեմք զորդիս աշխար-  
 հիս ընդ ծագել առաւաւտուն ընդ հրեշտակս կարգա-  
 30 պետեալս: Նաև զհաւուցն ևս ի տարափ առաւաւտուն  
 ճռուողելն ի ձեռն հովուապետին աւրհնել և փառաւորեալ

5 Բ քաղկիդոնի.

12 Բ շինեալ է. «ե» օտար ձեռքով.

20 Ա. չունի երկրորդ՝ «սուրբ». Բ երկրորդ «սուրբը» օտար  
 ձեռքով:

4 գարարիչն, յորոյ զաւրհնութիւնսն առնու Քրիստոս ի  
 5 ձեռն քահանայապետին: Ութեանն դարին ծագ<sup>10</sup>եալ  
 զլոյս ամենայն աշխարհի ողորմութեանն, ըստ երանե-  
 10 լոյն Յովհաննու ի հաթուղ<sup>159</sup>իկէին ասելով, թէ «Տեսա-  
 5 նելոց եմք զնա՝ որպէս եւ է իսկ», և դարձեալ եթէ,  
 «նման նմա լինելոց եմք», այսու մեծի ըստ գերագոյն  
 ասելոյ խորհրդածութեամբք վերհամբարձեալ ի ստորնայ-  
 նոցս, զի հնգիւք սաղմոսիւք ի նախերգականին զհինգ  
 զգայարանսն նշանակէ. և այլ հաղմածք ժամուցն դա-  
 10 ճուճն և զհասակդ կոչէ. և կատարելագունիցն ասելով  
 Փրկչին, «Եթէ ոչ դողձիք եւ վնիձիք իբրև զմանկտիս».  
 և աստի կատարումն աղաւթիցն, եթէ, «Ներհնեցէք ման-  
 կունք զտէր եւ աւրհնեցէք զանուն տեսան», որ հրամա-  
 նին անսացեալ պատասխանւոյն. «Նղիցի անուն տեսան  
 15 աւրհնեալ յաւտեանս, որ կանգնելոց է ի գլորմանէ  
 կորստեանն և կարգեաց ընդ վերին զաւրսն. որում  
 փառք յաւտեանս ամէն:

[Ե ԳԼՈՒԽ]

20 Հարցումն երկրորդ ժամուն. Եթէ զի՞նչ է առաւա-  
 20 տուն Աղաւթքն ընդ որս արեազալսն կատարեմք:  
 Պատասխանի: Այս խորհուրդ, որ միւսանգամ  
 գալստեանն Քրիստոսի լինելոց եմք, զյարութիւն մարդ-

4 Ա. Յովհ. Գ 2.

6 Ա. այսիւ, Բ այսու. «ո» օտար ձեռքով.

10 Ա. գոչէ.

11 Մատ. ԺԸ 3.

12 Սաղ. ՃԺԲ 1. 2.

14 Բ պատասխանեն. «Են» օտար ձեռքով.

18 Տես Համառօտ և զլուխ.

20 Յոհ. Իմ. 92 «Եւ եթէ զի՞նչ խորհուրդ ունի առաւօտին  
 աղօթքն, որ ընդ արեազալսն կատարեն: Այս աղօթքս զմիւսանգամ  
 զգալուստն Քրիստոսի նշանակէ, և յարութիւն մարդկան ի գե-  
 րեզմանացն» և այլն:

21 Բ խորհուրդ է որ ի. «է» «ի» օտար ձեռքով.

կան նշանակէ. զի յայսմ ժամու առաւաւտու լինի նորոգումն տիեզերաց, թէև ասի «ի մէջ գիշերին» ըստ 10<sup>p</sup> տէրունական բանին, այլ նա է առաւաւտն կենաց և սկիզբն երևելոյ արեգականն արդարութեանն. և լինե-  
 5 լ<sup>159<sup>p</sup></sup>ոց է յայն առաջին ժամու յայտնութեանն մեծի. վասն զի յայսմ ժամու վարկանիմ զմարդն ստեղծեալ ի կենդանարար ձեռացն, յորում և ի նմին ժամու և զմիւսանգամն ընդունի զկենդանութիւն. այսոցիկ խորհրդոց բազումք վարին ի ներկայսս աւրինակս ըստ աս-  
 10 տուած ընկալն Պաւղոսի ասելոյն, եթէ, «Եւ սյուպէս յարութիւն մեռելոց», և եթէ, «փող հարկանի եւ մեռեալք ի Էրիստոս յարիցնն յառաջագոյն» այլաբն հանդերձ. զնոյն և սուրբն Գրիգոր յեղեղու մանրապատումն յանցանել ձմերայն բուսոյն և տնկոյն բողբոջմամբ, և զհա-  
 15 ւուցն ի գիշերոյն մերձ լինել յառաւաւտն ձայնք:

Վասն այսորիկ ահիւ սթափեալ աղաւթէ ի ժամուս յայսմիկ, ակն ունելով յուսով նորոգման միւսանգամ. և նախագգեստ լուսոյն զուարթաթոխ ձեպիլ ի հանդիսումն ապմովք երևեցելոյն, և հատուցանող ըստ իւրա-  
 20 քանչիւր զարժանն, որում փառք յաւիտեանս ամէն:

2 Բ եթէ. փխ = թէև  
 2 Մարկ, ԺԳ 35.  
 10 Ա. Կորնթ. ԺԵ 42. 52.

14 Բ ձմերայնայն բուսոցն և տնկոցն. «ոյն, ց, ց» օտար ձեռքով.  
 15 Ա. գաթանգեղոսի «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» մասի մէջ կարգում ենք, — «Բոյսք բողբոջոցն զարնանւոյն երևեսցին յետ ձմերանւոյն: Սոյն օրինակ և յարութիւն մեռելոց (Հատուած 645, 646): «Արդարեւ իսկ գարունն բուսարեր՝ զօրինակ մարդկան յարութեան մեռելոցն ուսուցանէ (Հատ. 649)»: «Արդ ի գարունս բուսարերս և ծաղկարերս, որք զնորոգութիւն գեղեցկութեանն զարնանւոյն յետ հնութեան ձմերայնւոյն բերիցեն՝ և թռչնոցն հաւուցն ծանուցեալ զիւրեանց ժամանակ գալստեանն: . . . Զի ժամանակաւ զարնանւոյն և իւրեանց գալստեամբն ցուցանեն զժամանակ վարուց կենաց ուրախութեան մարդկան, ի ձայն առնելն, ի ճշելն, ի ճողղելն՝ ի շինել բունոցն (Հատ. 655)». Ա. գաթ. 1909. Տփլիսիս:

## [2 ԳԼՈՒԽ]

Հարցումս նրորդ ժամուն, թէ որպէս է նրորդ  
ժամու Աղօթքն խորհրդաբերին:

Պատասխանի. Խորհրդաբերումս այս մեծին է խոր-  
5 հուրդ և ի վեր քան զմեր կարողութիւնս. բայց ի մերոյ  
Յիսուսի Քրիստոսի կրիցն և ի ներգործութեանցն կա-  
րեմք ուսանել, զոր կատարեացն վասն մերոյ փրկագոր-  
ծութեանցն ի կենդանարար շարշարանս իւրում, <sup>140</sup> յա-  
սել անդ երանելոյն Մարկոսի, «էր, ասէ, ժամ նրորդ»  
10 եւ հանին զնա ի խաչ»: Արդ էր արդեալք յերրորդ ժա-  
մու գայ ի խաչ ելանել. թուի եթէ ի նոյն ժամու գե-  
րեալ լինէր նախաստեղծն ի բանսակուէն մոլեկան ըն-  
թացիւք ի ծառն մահաբեր՝ ի շար խորհուրդն, յորում  
էմանուէլն մերով կերտարանաւքս զծանրութիւն մեղաց  
15 մերոց բեռնաւորեալ, երթայր ի նոյն ժամու ի տեղի  
կառափմանն բարձրանալ ի խաչափայտին, զի զանկեալն  
վերացուցէ բեռովք զոտս և զձեռս առաքինարար տա-  
րածեալ յաղագս Աղամայ յանդգնապէս ընթացիցն ի  
պտուղ և ի ճաշակ ծառոյն, և զձեռագիր յանցանաց  
20 զկտակն խափանեաց. և տարերցն ապականութիւն որ  
յայսմ ժամու աւճաջամբ պտղովն զրդեաց, խաղացու-  
ցանէ իւրով մաքրողական շարշարանաւքն:

Իսկ Յովհաննէս վեցերորդ ասէ լոկ, ոչ զի զիս <sup>141</sup> աչ

1 Տես Համառօտ 2 գլուխ.

4 Տես Յով. Իմ. 96. «Եւ եթէ զի՞նչ խորհուրդ ունի նրորդ  
ժամու աղօթքն: նրորդ ժամու աղօթից խորհուրդս ի վեր է քան  
մեր կարողութիւնս, . . . Բայց . . . տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի  
ի կրիցն և ի ներգործութեանցն կարգեալս և այլն:

5 Ա. մերոյ.

9 Մարկ. ԺԵ 25.

15 Յով. Իմ. Բառնայր: Համառօտը՝ բեռնաւորեալ. Ա. Բ  
բռնաւորեալ.

23 Յովհ. ԺԹ 14:

ելանելոյն ասէ, այլ զժամ ձաղանացն՝ որ ի հրէիցն ըմ-  
 բոնեալ: Բայց ի խաչն յԵրրորդ ժամու վերացաւ բազէն  
 տարածեալ զձեռս իւր դիտելով ընդ հարաւ, յափշտա-  
 կեալ զմարդն ի մահուանէ ի կեանս: Ապա յետ այսորիկ  
 5 յորեղինի ի նոյն աւրինակաւ աւուր յԵրրորդ ժամու  
 տեսան<sup>140</sup> եմք զՀոգին սուրբ յառաքեալս հրեղէն լեզ-  
 ուաց: Սակս յայսմ ամենայնի ասեմք, յայսմ Երրորդ  
 ժամու գլորեալ զմարդն առաջին, յորում ել և դրարե-  
 գործութիւն ընկալաւ: Ապա յիրաւի պատկառեալ յայսմ  
 10 ժամու աղաւթիցն խնդրելով զՀոգին սուրբ առաջնորդ  
 լինել յերկիրն բարութեանց, ըստ որում միածնին Բա-  
 նին ի նոյն Երրորդ ժամու ծագէ յարարածս զգալուստն,  
 զորս մի ոք անմասն եղեալ ի փրկութենէն զրկեսցի,  
 որում փառք յաւիտեանս ամէն:

[Է ԳԼՈՒԽ]

Աթէ չինչ աւրինակ իմասցուք ի մեծի աւուր յա-  
 րութեան Տեառն յԵրրորդ ժամու զգեստաւորեալն Քա-  
 հանայապետին, և ամփիռն որ ի ձեռին ունի: Եւ կամ  
 զինչ յինքեան ունի խորհուրդ Տէր Թագաւորեայն, և  
 20 սուրբ Աւետարանն և համբարձումն հանդերձ սրբասա-  
 ցութեամբքն, և կամ զինչ Քեզ վայելեայն և Մարգա-  
 րէականն, կամ Մեսեղին և Առաքելականն, և կամ զինչ  
 Ալէլուան և Աւետարա<sup>120</sup>նն սուրբ, և Հաւատամն մեծա-  
 ձայն, և սուրբ Խորհուրդն, որ Ճաշսժամ կոչի:

2 Յովբ. 1, Թ 26 «Ի քումմէ իմաստութենէ եկաց բազէ տա-  
 րածեալ զթևս, անշարժ դիտել ընդ հարաւ»:

5 Բ յորեղինի.

8 Բ և ի նոյն ժամ զրարեգործութիւն. «ի նոյն ժամ» օտար  
 ձեռքով:

14 Բ չունի՝ ամէն.

15 Տես Համառօտ է Գլուխ.

19 Բ Թագաւորեացն.

20 Բ սրբասացութեամբք.

22 Բ մէսէզին,

Արդ ամենայն քրիստոսաւանդ հանգերձելոցս այսոցիկ խորհուրդս ի մէջ պաշտեցելոյ կարապետ և սառեր գիտեմք գոյով, քան ի առ զՄովսէսն հրամայեալս՝ ի հր-  
 5 նումն. և ոչինչ ընդ վայրաքարչ և ընդ երկիր կոխելի,  
 այլ «ի վերայ ուսոց բարձեալ սերելն»՝ ըստ Եսայեայ  
 44<sup>ա</sup> ասելոյն երկնաքաղաքացւոյն խոհերս. և որք ընդ  
 Մովսէսի կարողանան անուշ զմեծ պատիւ քահանայու-  
 թեան, նախ զանձինս զգեստաւորեալ Ասաուծոյ արժա-  
 10 նաւորին, ապա յայնն ըմբոշխնեալ, որպէս առ երջա-  
 նիկն Մովսէս եղև նաև տեսիլ գարմանալի. և խորանին  
 փառքն, և զգեստու քահանայութեան գործ պճղնաւորն  
 առ ստորոտով զանգակաւք, և վակաս չորեքկարգեան  
 ակամբք յուսս, և տախտակք դատաստանին երկու ա-  
 15 կամբք վեցակի անուամբք գրեալ զկնքաձեն խորհրդոյ  
 ի լանջան, և զխոյրն մեծարգի ի զլուխ քահանայութեանն.  
 զայսոսիկ նախ քան զգալ ճշմարտութեանն մտից տպա-  
 ւորեալ սուրբ Հոգւոյն, որով կարողանամք երկոքումք  
 զմիմեանս իմանալ. և սկսցուք կատարելութեամբ  
 20 Բ<sup>1</sup> 2<sup>բ</sup> արձրելոյն և գրոց առաջնորդութեամբ լուծանել  
 զինգրելիս բանիդ:

Արդ զպճղնաւորն ազանելով Ահարովնի, նախ զմար-  
 մնանայն աստուածն Բանին նշանակէ ըստ Եզեկիէլի,  
 «Արքվեց նւ ի միջի նոցա այր մի որ զգեցեալ էր զպճղ-  
 25 նաւորն». իսկ այլք՝ տապար ի ձեռին, զհին և նոր կտա-  
 կարանք, որ կոտորեցին բարձին զգայթակղութիւնս  
 յերկրէ ի ձեռն խաչազգեստս մարմնացելոյ Բանին հաւր:

(Շարունակելի)

Սահակ վարդապետ

2 Բ պաշտեցելոց.

6 Եսայ. ԽԹ 22. 42 12.

13 Ա Բ ստորոտաւ.

15 Բ անուամբ.

17 Ա զալ. Բ զգալ. «գ» օտար ձեռքով.

22 Հմմտ. Յով Իմ. 138. «Արդ պճղնաւոր զգեցելով».

22 Ա ազանելոց.

23 Եզեկ. Թ 2.

24 Ա արս.

24 Ա զգեցեալն: